

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՄԵԾ ՊԱՀՔԸ

Մեծ Պահքը եկաւ,
Ապաշխարանքի և ժուժկալուծեան
Հըրաւիրելու,
Մեր վայելքներէն ծանրացած հոգին,
Սրբագործումի խորհուրդով խորին:

Մեծ Պահքը եկաւ,
Մեր կեանքը սակայն Մեծ Պահք մէ եղած
Ու չենք ունեցած հացը մարմնական
Եւ հացն հոգիին,
Մեր օրօրանէն մինչեւ գերեզման:

Արհաւիրքներու
Յաճախանքն անվերջ լեցուցեր է մեր
Ցերեկն ու գիշեր,
Եւ չէ մօտեցած ձեռքն ազատարար
Մեզի տանելու խաւարէն լոյսին:

Դուրս ենք վըտարուեր
Հայրենիքէն մեր, սիրտերէն մարդոց,
Քալեր ենք անդու
Գերեզմաններէն մեր երազներուն,
Առանց հասնելու հանգրուանին մեծ:

Եւ արցունքներով
Մաքրեր ենք կըտաւն մեր հոգիներուն,
Բայց չենք ունեցած շընորհն ըլլալու
Զաւակն Աստուծոյ
Եւ կամ հարազատ եղբայրը մարդոց:

Պահքը թող պահեն և ապաշխարեն
Հաճոյամոլներն մեր այս աշխարհին,
Որոնք կը լորձեն միշտ անյագօրէն,
Բարիքներն իրենց սեղանին առատ:

Իսկ հէքն ու նօթին,
Որոնք կը ծամեն քարը հացին տեղ,
Ինչո՞ւ պահք պահեն,
Իրենց կեանքն ամբողջ Մեծ Պահք է
Եղած,
Արեւին ներքեւ մեր այս աշխարհին:

Բայց եթէ կ'ուզես,
Աստուած խստադատ, պատրաստ ենք
նորէն
Քալել ճամբայէն հաշիդ արիւնոտ,
Որ մեր խաչն եղաւ, դարերով դարեր,
հաշուելէդ ի վեր:

ԵՂԻՎԱՐԴ